


Оригинал  
Углекислотно-кислотный  
Ионогенито-кислотный



1939



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ԼՈՒՍԴՈՂԿՈՄԱՏ

91

0-98

## ԾՐԱԳԻՐ

ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ

343/112

ԼՈՒՍԴՐՈՑ

ՅԵՐԵՎԱՆ

1939

5 OCT 2011

ՀԱՐՄ  
2-34152

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԴՈՂԿՈՎԱԾ

# ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ



Խմբ. № 10227

ԼՈՒՍԴՐԱԾ

ՅԵՐԵՎԱՆ

1939

## ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ  
ԽՄԲԱԿՆԵՐԻ

## 1. ԿԱԶՄԱԿԵՐՊՉՈՒԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Արտադասարանական այլ խմբակների նման աշխարհագրություն ուսումնասիրող արտադասարանական խմբակները կարող են լինել յերկու կարգի՝

1. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ, վորոնց հիմնական խնդիրներն են հանդիսանում՝ հետաքրքրություն առաջ բերել գեղի աշխարհագրությունը, լրացնել աշակերտության աշխարհագրական գիտելիքների պակասը, յերեվան հանել առանձին աշակերտաների հետաքրքրությունն ու հակումը գեղի աշխարհագրական գիտությունները:

2. ՀԱՏՈՒԿ ԽՄԲԱԿՆԵՐ (սակավանդամ), վորոնց հիմնական խնդիրներն են հանդիսանում՝ ոժանդակել այն աշակերտաներին, վորոնք վորոշակի հետաքրքրություն և հակումն ունեն գեղի աշխարհագրական գիտությունը, խոցացնել նրանց սովորածը գպրոցում, աշակել նպանաց ավելի անաշխատ գնալու աշխարհագրական գիտելիքներին տիրապետելու ասպարիզում:

Խմբագիր՝ ՀՈՎՀ. ՍՏԵՓԱՆՅԱՆ  
Մբարդիչ Մ. ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ  
Կանուրով ԱՐԲԱԳՐԻՆ՝ Հ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Գլավլիս Խ. 8012 Պատվեր Ա-190 8իրաց 1000  
Գետ. Համալսարանի Հրատարակության տպարան, հայուն Ա-72

206-87

Աշխարհագության արտադասարանական խմբակ-  
ները կարելի յե կազմակերպել 3 և 4-րդ, 5—7-րդ և  
8—10-րդ դասարանների աշակերտների համար առան-  
ձին:

Այդպիսի խմբավորումն ինքնըստինքյան ցույց ե  
տալիս, վոր պարապմունքների համար թեմաներ ընտ-  
ըլլիս, ինչպես և այդ թեմաներն աշակերտներին առա-  
ջազրելիս վճէ միայն նկատի պետք և ունենալ աշա-  
կերտների տարիքային առանձնահատկությունները,  
այլ և նրանց աշխարհագրական պատրաստականու-  
թյունը:

Մեծ նշանակություն ունեն հատկապես խմբակ-  
ների աշխատանքի ձևերը:

Յեթե բարձր դասարանների աշակերտների համար  
աշխարհագրական խմբակի պարապմունքները մեծ մա-  
սամբ կարող են տարվել լեկցիոն մեթոդով, դասախո-  
սությունների ձևով, զեկուցումների միջոցով, առա-  
մյուս խմբակներում պարապմունքները մեծ մասամբ  
պետք և տարվեն մատչելի զրույցների, գեղարվեստա-  
կան (աշխարհագրական) բրոցյուրներ ընթերցելու կամ  
վերապատճելու, աշխարհագրական յերեկոների, վիր-  
տուրինաների, կիսո ցուցադրման, փորձերի ձևով և այլն:  
Բոլոր տիպի պարապմունքների համար ել մեծ նշանա-  
կություն ունեն հքսկուրսիաները, գիտական մատ-  
չելի հետախուզական աշխատանքները, դավանագիտա-  
կան աշխատանքները, գրանք նոր տպավորություններ,  
նոր հետաքրքրություններ կառաջացնեն խմբակի ան-  
դաշտների մեջ, գիտականորեն ճանաչել կտան աշխ.  
շրջապատը, սիրել կտան բնությունը, մեծ ձգտում կա-  
ռաջացնեն նրանց մեջ ընության ուժերը մարդուն ծա-  
ռայեցնելու, ել ավելի սիրել կտան մեր մեծ հայրենի-

քը, նրա բազմազգ ժողովուրդներին, կտոգորեն խոր-  
հըրդային հայրենիքի պաշտպանության սրբազն  
պարտքի զգացմունքով: Այս ինպիրների հետ մեկտեղ,  
ինչպես աշխարհագրության առարկայի գասավանդումն  
ընդհանրապես, նույնպես և աշխարհագրության արտա-  
գասարանական աշխատանքները խոշոր ազդակ կհան-  
դիսանան աշակերտների մեջ Մարգարենինյան աշխար-  
հայցքի մշակման գործում: Ուսումնասիրելով աշ-  
խարհագրական շրջապատն առհասարակ, կատարելով  
անհրաժեշտ փորձեր և ուսումնասիրություններ, ծանո-  
թանալով առավելապես խորհրդային աշխարհագետ գիտ-  
ականների կյանքին ու գործունեյությանը, ծանոթա-  
նալով մեր յերկրի սոցիալիստական շինարարության հո-  
յակապ պատկերներին, աշխարհագր. շրջապատը գիտա-  
կանորեն ճանաչելու և ընության ուժերն աշխատավոր  
մարդուն ծառայեցնելու գծով կատարվող հերոսական աշ-  
խատանքներին—աշակերտները զրանով մեծ փորձ ու  
գիտելիքներ կկուտակեն՝ բնության յերկույթները  
մարդուստական դիալեկտիկական մեթոդովիայով լու-  
սաբանելու համար:

Արտադասարանական այլ խմբակների նման աշ-  
խարհագրական խմբակները ևս պետք ե կազմակերպ-  
վեն կամավոր սկզբունքով: Նայած անհատ աշակերտ-  
ների աշխարհագրության նկատմամբ ունեցած  
պատրաստությանը և զրանով պայմանավորված ցան-  
կությանը—հնարավոր ե յերբեմն հաշվի չառնել տարի-  
քը կամ վոր դասարանից լինելը և նրանց տեղավորել  
ավելի բարձր խմբակներում. սակայն սրանք կարող  
են յեզակի գեղքեր լինել:

Կարող են լինել նաև այս և այն խմբակում յեր-

բեմ այնպիսի թեմաների շուրջը զրույց դասախոսություններ, յերբ հնարավոր կլինի մյուս խմբակների անդամներին, ինչպես և առնասարակ հետաքրքրություն ցուցաբերող աշակերտներին ևս մասնակից դարձնել եմբակի արժեքավոր և խրախուսելի աշխատանքի ձևերից պետք ե համարել նաև հասարակության և ծնողների համար կազմակերպած աշխարհագրական դասախոսությունները, յերեկոները—ակումբում, դպրոցում և այլն:

Խմբակի պարապմունքների հաջողությունը մեծ չափերով կախված է խմբակի ղեկավարից, վորը լինենելու յե դպրոցի աշխարհագրության դասատուներից մեկը: Խմբակի ղեկավարն ինքը նաև պետք ե սիրի աշխարհագրությունը, միշտ հետաքրքրվի աշխարհագրական նորություններով, անձամբ կամ դպրոցի միջոցով ստանա համապատասխան գրականություն, և առհասարակ, ունենա աշխարհագրական հարուստ գրադարան: Այդպիսի գրադարան պետք է կազմակերպել նաև դպրոցում աշխ. կարիքնեաներին կից և ողտագործել արտադասարանական աշխատանքների և ընթերցանության համար: Անհրաժեշտ է վորպեսզի դպրոցը համապատասխան կերպով կահավորի աշխարհագրական կարիքնեանը, հավաքի այնտեղ աշխարհագրական գործիքներ, նկարներ, սխեմաներ, քարտեղներ, գիտական նյութեր, ինքնաշխն գործիքներ և մոդելներ, ապաների, բույսերի և այլ կոլեկցիաներ, աշխարհագետների և հետախույզների պորտրեներ և այլն:

Աշխարհագրական խմբակը գեղի աշխարհագրությունն առանձնակի սեր ցուցաբերող աշակերտների աշխակցությամբ կարող և հարստացներ

կան կարիքնեալը, ոժանդակել աշխարհագրական հրապարակի կազմակերպմանը, աշխարհագրական ալլումներ կազմելուն, սխեմաներ և դիագրամներ գծագրելուն, ինքնաշխն գործիքներ և մոդելներ պատրաստելուն, վորոնք անշուշտ կոժանդակին աշխարհագրության դասավանդմանը գպրոցում: Աշխարհագրական խմբակը պետք ե գըպրոցում ունենա աշխարհագրական անկյունն, վորտեղ քաղական մոմենտի և խորհրդային ընթացիկ կյանքի, կարևոր գեղքերի կապակցությամբ և համապատասխան բովանդակությամբ կցուցազրի խորհրդային մամուլից հոգվածներ, նաև քարտեղներ, դիագրամներ, ֆոտոնկարներ, լոգունգներ և այլն:

Աշխարհագրական խմբակն ամբողջապես պետք ե հենվի աշակերտների ստեղծագործական ինքնագործունյության մաքսիմալնախաճեռնության վրա: Խմբակի ղեկավարը՝ դասատուն, հիմնականում պետք ե հրահրի և առաջ մղի խմբակի անդամների հետաքրքրությունը գեղի աշխարհագրական գիտությունը, ժամանակին ու ճիշտ մոտեցումով ոժանդակի և կազմակերպի աշակերտների նախաճեռնությունն ու ինքնագործունյությունը

Խմբակավար դասատուն, մանավանդ բարձր դասարանների աշակերտների մասնակցությամբ կազմակերպած խմբակներում, մեծ չափերով պետք ե զարկ տա խմբակի անդամների ինքնուրույն աշխատանքի ձևերին—այսինքն՝ աշակերտների կողմից կազմակերպած զեկուցումներին ու դասախոսություններին: Դասատուն պետք ե ոգնի զեկուցող աշակերտին ձեռք բերելու և ոգտագործելու ոժանդակ գրականություն և աղբյուրներ, զեկուցման ժամանակ ոգտագործելու քարտեղներ, դիագրամիներ, աշխարհագրական նկար-

ներ, սխեմաներ, դիագրամներ և այլ գծադիրներ, կազմելու զեկուցման կօնսպեկտն ու թեղերը և այլն: Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է կարգալու յեղանակից աստիճանաբար անցնել բանավոր զեկուցումների:

Յեթե գպրոցում չեն կազմակերպված աստղաբաշխության և յերկրաբանության ~ հանքարանության արտադասարանական խմբակներ, կարելի յե աշխարհագրական խմբակի պարապմունքների մեջ մտցնել այդ գիտություններին վերաբերող թեմաներ: Աշխարհագրությունը, աստղաբաշխությունը և յերկրաբանություն-հանքարանությունը լինելով հարակից գիտություններ, շատ հաջոցերում լրացնում են միմյանց, ուստի և այդ գիտություններն ավելի բազմաբովագրակ ու հետաքրքիր կդարձնեն աշխարհագրության խմբակի պարապմունքները:

Ինքնստիճան հասկանալի յե, փոր այդ առաջինների գասատուները պետք ե ոժանդակեն համապատասխան թեմաների զեկուցումով հանդես յեկող աշակերտներին իրենց խորհրդատվությամբ, ոժանդակեն նաև խմբակի ընդհանուր աշխատանքներին:

Խմբակների անդամների թիվը չպետք ե լինի 20—25 հոգուց ավելի: Բազմամարդ խմբակներում զեկավարությունը և աշխատանքները կարող են տուժել, խմբակի անդամներից յուրաքանչյուրի ինքնազորունեցությանը քիչ ժամանակ կմնա և հերթ չի հասնի:

Խմբակները կարող են ունենալ ամսական առավելն յերկու պարապմունք՝ մեկից յերկու ժամ տեղությամբ:

Յուրաքանչյուր պարապմունք պետք ե նախա-

պատրաստված լինի խնամքով, հետաքրքիր բովանդակությամբ այնպես, վոր խմբակի անդամները բուռն հետաքրքրությամբ սղասեն ամեն մի նոր պարապմունքի և վոչ թե մասնակցեն, կատարելով լոկ պարտականություն:

Խմբակի պարապմունքների համար պետք ե շատ համառոտ արձանագրություններ կազմվեն, հիշատակելով պարապմունքի որը, թեման, զեկուցողի և արտահայտվողների անուն ազգանունը, ընդհանուր դնահատականը (անցավ հաջող, հետաքրքիր և այլն):

Անհրաժեշտ ե աշխատանքն այնպես կազմակերպել փոր յուրաքանչյուր պարապմունքից վորեւ դոկումենտալ հետք մնա —որինակ՝ ալբոմ, ցուցահանդես, գրավոր թեղիմներ, կոնսպեկտը կամ ոեֆերատը և այլն, վորոնցով կհարստացվի դպրոցի աշխարհագրական կաբինետը:

Եյսեղ տալիս ենք խմբակների պարապմունքների թեմատիկան:

Եյդ թեմատիկան որինատիր ե: Խմբակը կազմակերպելուց հետո, կարելի յե այդ թեմատիկան քննության առնել խմբակի կազմակերպչական նիստում և համապատասխան լրացումներ կամ կրծատումներ անել յենելով խմբակի անդամների ցանկությունից կամ հետաքրքրությունից, ինչպես և դպրոցի ունեցած հնարավորություններից ու դասատույի կարողությունից: Պարապմունքների որացուցային պլանը, պարապմունքի որը, ժամը, տեղը, թեման և թե ումն և հանձնարարված զեկուցում ~ զրույցը՝ պետք ե վաղորոք ժշգակված լինի և փակցված հատուկ անկյունում կամ արտա-

զասարանական խմբակների հայտարարության տախտակին:

Աշխարհագրական խմբակի ղեկավարները պետք են կապ պահպաննեն Լուսժողկոմատի արտադպրոցական կարինետի հետ և ցուցումներ ստանան նրանից:

2.

### Թ Ե Մ Ա Տ Ի Կ Պ Լ Ա Ն

Յ-րդ յեկ Ա-րդ դասարանների աշխարհագրական  
արտադպատաճական խմբակների

1. Կոլումբոսը և Ամերիկայի հայտնագործումը:
2. Մագելանի շուրջերկրյա ճանապարհորդությունը:

3. Կոպերնիկոս, Զորգանո - Բրունո, Գալիլեյ - Նրանց մատուցած ծառայություններն աշխարհագրական գիտությանն ու մարգկությանը. Նրանց պայքարը կրոնի գեմ (կարելի յե կազմակերպել մի քանի պարագունք):

4. «Սիբիրյակով», «Լիտկե» և «Չելյուսկին» սառցահատների գիտական եքսպեդիցիաները և նրանց կատարած աշխատանքի նշանակությունը (կարելի յե հատկացնել մի քանի պարագունք):

5. Ոգերեկութաբանական կայանները և նրանց նշանակությունը:

6. Հյուսիսային բեվեռի նվաճումը Խորհրդային գիտնականների կողմից և դրա նշանակությունը. Պապանինականներ:

7. Զկալովի, Բելյակովի և Բայրուկովի անվայ-

քեջը թուիչքը Հյուսիսային բեվեռի վրայով և այդ թուիչքի նշանակությունը:

8. Գրոմովի, Յումաշեկի և Դանիլինի անվայրեջք թուիչքը Հյուսիսային բեվեռի վրայով (№ 7, № 8 թեմաները կարելի յե միացնել մեկ պարապմունքում):

9. Պանամայի և Սուեդի ջրանցքների պատմությունը և նրանց նշանակությունը:

10. Էնկ. Ստալինի անվան Բալթիկ - Սպիտակ ծովերի ջրանցքը: Մուկա - Վոլգա ջրանցքը: Դրանց պատմությունը և նշանակությունը:

11. Մեծ Վոլգայի պրոբլեմը:

12. Կումա - Մանիչի և Վոլգա - Դոն նախագծված ջրանցքների նշանակությունը:

13. Դնեպրոսկեսը, նրա կառուցումը և նշանակությունը:

14. ԽՍՀՄ-ի սահմանակից պետությունները և մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը:

15. Պատերազմի յերկու ոջախները. ֆախիստական Դերմանիան, Իտալիան և Ճապոնիան, նրանց իմպերիալիստական նվաճումները Յելլոպայում, Ասիայում և Աֆրիկայում ու Խորհրդային Միության գեմ պայքարի ընդհանուր ճակատ կազմակերպելը (կարելի յե ունենալ մի քանի պարապմունք):

16. Վրացական, Ադրբեյջանական և Հայկական ԽՍՀ Հանրապետությունների վերաբերյալ թեմաներ՝

ա) Մուղանի տափաստաննը, նրա վոռոգման գծով տարվող աշխատանքները և մնանական հեռանկարները:

բ) Թալիշի մերձարեվագարձային շրջանի բնությունը և անտեսական հեռանկարները:

շ) Բագվի նավթահանքերը:

դ) Սև ծովի արեվելյան ափի մերձարեվագարձա-

յին շրջանը և նրա նշանակությունը ԽՍՀՄ-ի անտեսության համար:

յե) Զագես, նրա կառուցումը և նշանակությունը:  
զ) Սեվանա լիճը և նրա հետ կապված աշխարհագիտական խնդիրները:

ե) Սեվան - Զանգուի կասկադը:

ը) Այլր լիճը և նրա նշանակությունը վոռոգման համար:

թ) Դուերի ջրանցքը և դուերի վոռոգման նշանակությունը:

ժ) Խորհրդային Հայաստանի բնական հարստությունները:

ժա) Խորհրդային Հայաստանի գործարանները:

ժբ) Սինթետիկ կառչուկի գործարանը և նրա

նշանակությունը:

### 3.

#### ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Ֆ-Յ-ՐԴ դասարանների աշխարհագրական  
արտադասարանական խմբակների

Յ-ՐԴ և Գ-ՐԴ դասարանների աշխակերտներից կաղմած աշխարհագրական արտադասարանական խմբակների համար նախատեսած թեմաները շատ քիչ բացառությամբ, սակայն ավելի խորացրած կարելի յենդապործել և այս խմբակներում:

Վորպես լրացրուցիչ թեմաներ կարելի յենդապործել հետեւյալները.

1. Մարկո - Պոլոյի, Վասկո - գե-Գամայի, Պրժեշտակու, Միկլոս - Մակարյի, Մեղովի, Կուկի, Բարենցի, Բերինգի և մյուս հայտնի ճանապարհորդների

կենսագրությունները և նրանց կատարած գիտական ձանապարհորդությունների նշանակությունը (կարելի յենդապությունների մի քանի պարապմունք):

2. Նախան, Պիրի, Սկոտ, Ամուղնան, Անդրեև և մյուս բեվեռային հետախույզների կենսագրությունը և նրանց կատարած գիտական աշխատանքների նշանակությունը:

3. Հրաբուխներ և յերկրաշարժներ:

4. Յերկրի և մոլորակների առաջացումը (արեգականային համակարգությունը):

5. Աստղային յերկինքը և կողմնորոշում աստղերով:

6. Ժամանակի վորոշումը աստղերով, արեգակով, քարտեզով, որացույցի պատմությունը:

7. Տարվա յեղանակները հյուսիսային և հարավային կիսագնդերում:

8. Լուսնի վրա:

9. Յերկրագնդի հողաբուսական գոտիները (բեկեռային շրջան, տունդրա, տայգա, խառն անտառների գոտի, սևողային և չոր տափաստանների գոտի, լեռնային շրջաններ, անապատային գոտի, մերձարեվագրածային գոտի, արեգակարձային գոտին, և այլն) լանդշաֆտները, նրանց աշխ. տնտ. պայմանները:

10. Խոպանիա, Զեխոսլովակիա, Չինաստան, Հարեցատան. այս յերկրների ֆիզիկո-աշխարհագրական, պատմա-անտեսական և քաղաքական համառոտ նկարագրությունը: Այդ յերկրների ժողովուրդների հերոսական պայքարն ընդգեմ ֆաշիստական պետությունների հարձակումների:

11. ԽՍՀՄ տասնմեկ միութենական հանրապետությունները:

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Տ-10-րդ դասարանների աշխարհագրական  
առարկասարանական խմբակների

Այս խմբակի թեմատիկ պլանում կարելի յե մըս-  
ցնել 3-4-րդ և 5-7-րդ դասարանների աշակերտնե-  
րի համար կաղմակերպած աշխարհագրական խմբակի  
նյութերից (շատ ավելի խորացրած), ինչպես նաև լրա-  
ցուցիչ կերպով կարելի յե նկատի ունենալ հետեւյալ  
թեմաները:

1. Աֆրիկայի, Ամերիկայի և Ավստրալիայի գա-  
ղութացման պատմությունը:

2. Յեվրոպայի քարտեզը 1914 թ. իմպերիալիս-  
տական պատերազմից առաջ և վերսալյան դաշնագրից  
հետո:

3. Հեռավոր Արեվելքը և ճամփնական իմպերիա-  
լիզմը:

4. Ճապոնիայի ազրեսիան և Զինաստանի պայ-  
քարն իր անկախության համար:

5. Գերմանական ֆաշիզմը և ԽՍՀՄ-ի պաշտպա-  
նության ամրապնդումը:

6. Միջերկրական ծովը և Իտալո-ֆրանսիական  
ու անգլիական իմպերիալիզմի շահերի բաղխումը:

7. Խաղաղ ովկինոսուը և Ճապոնիայի ու ԱՄՆ-ի  
պայքարը:

8. Մոնղոլիայի և Տուվայի ժողովրդական հան-  
քապետությունները:

9. Անգլիան և Հնդկաստանը:

10. Լատինական Ամերիկա:

11. III հնդկամյակի սոց. շինարարության քարտեզը:

12. Արդյո՞ք կյանքը կա մոլորակների վրա:

13. Լապլաս, Նյուտոն, Ֆուկո, Կեպլեր:

14. Գիսաստղերը և վայր ընկնող աստղերը:

15. Գեորգիական հրաները և նրանց առանձնա-  
հատկությունները:

5.

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թե ինչպես կարելի յե կաղմակերպել աշխարհա-  
գրական խմբակի պարապմունքները, հատկապես աշ-  
խարհագրական յերեկոները, վոր նրանք իրոք հետա-  
քրքեր լինեն, զրավեն ու յերկար ժամանակ անմոռաց  
մնան աշակերտների հիշողության մեջ, վորպես որի-  
նակ բերում ենք այստեղ մի քանի նմուշ Յու. Սուբ-  
բուտինայի «Արտադրողական աշխատանքը աշխար-  
հագրությունից» հոդվածից, վոր ապագրված ե «Գeo-  
գրաֆիա Յ ՇԿՈԼԵ» ամսագրի 1938 թ. № 3-ում:

Ընկ. Սուբրուտինան հիշատակում ե, վոր աշխար-  
հագրության արտադրողական աշխատանքների զծով  
նա զործագրել ե մի շարք միջոցառումներ, ինչպես  
որինակ:

1. Աշխարհագրական յերեկոները:

2. Յելույթներ պիոներական հավաքույթներում:

3. Աշխարհագրական նյութի դրամատիզացիան:

4. Դիապոլիտիկների և կիոն նկարների ցուցա-  
դրումը:

5. Առանձին աշխարհագրական թեմաների գեղար-  
վեստական ձևավորումը:

6. Աշխարհագրական թեմաների շուրջը ցուցա-  
հանդեսների կազմակերպում:

ինչպես և ընկ. Սուբրուտինան անցկացրել աշխար-

Հազրական յերեկոները, թեմա ունենալով «Տայգա»-ն:

### 1-ին բաժին

- Ճանապարհորդ ականատեսի՝ զրույցը Ուսուռ-  
քիական յերկրի մասին:
- «Ուսուռքիական յերկրի բնությունը» կինո  
նկարի գիտումը (յերաժշտական նվազակցությամբ):

### 2-րդ բաժին

- Յերաժշտական համարներ:
- Գեղարվեստական ասմունք—պատմվածք Ար-  
ևնյելի—«Դերսու ~ Ուղալա» գրքից:
- «Անտառի մարդիկ» կինո նկարի գիտում:
- Ըստմիջումներին տայգայի մասին կազմակեր-  
պած ցուցահանդեսի գիտում:
- Յերկրորդ յերեկոն ընկ. Սուբրոտինան հատկացրել  
է Զինաստանին:

### 1-ին բաժին

- Ուսուցչի զրույցը այդ յերեկոյի բովանդա-  
կության և նպատակների մասին. միաժամանակ աշա-  
կերտների ուշադրության սրումը գեղի Զինաստանի  
աշխատավորների պայքարն իրենց ստրկացնողների  
դեմ:

- «Վան-Լի» բանաստեղծության արտասանու-  
թյունը:

- Կինո նկար Զինաստանի մասին:
- Ինսցենիբովկա—ստվերախտղ «Զինաստանի  
յերեխաները մերժագործարանում»:

### 2-րդ բաժին

Դրամատիզացիա յերաժշտական բաժնով և բա-  
լետով:

(Դահլիճը զարդարված և յեղել չինական հեղափո-  
խական լողունզներով: Զինաստանի բնությունը և  
աշխատավորության կյանքը պատկերող նկարներով):  
Յերրորդ յերեկոն հատկացվել է «Տանդրա» թե-  
մային:



### 1-ին բաժին

1. Դաստուրի ներածական խոսքը յերեկոյի նպա-  
տակների և խնդիրների մասին:

2. Յերաժշտություն (աշակերտները նվազում են  
«Մրրիկ», «Հյուսիսային յերգ» յերաժշտական համար-  
ները և այլն):

3. Աշակերտների պատմվածքը «Տունդրան ձըմ-  
ուանը» թեմայի մասին:

4. Հյուսիսափալյի նկարի ցուցադրումը:

5. Կինո նկարի ցուցադրում տունդրայի մասին  
—աշակերտների բացատրական խոսքով (մեկը պատ-  
մում է կենդանիների մասին, մյուսը բնակիչների, յեր-  
րորդը՝ արդյունաբերական շինարարության և այլն):

### 2-րդ բաժին

1. Աշակերտների գեկուցումը Ս. Մ. Կիրովի մա-  
սին և մասնավորապես Կոլա թերակղզին ինդուստրա-  
ցման յենթարկելու գործում նրա ունեցած գերի մա-  
սին: Հիշատակություն ակադեմիկ Գունդիմիլ Կուր-

կրաբան Լաբունցովի կողմից Խիբինսերը հետազոտելու և ուսումնասիրելու մասին:

2. Աշակերտների յելույթները (պատմվածք) «Տունդրան գարնանը» թեմայի շուրջը (ծաղիկների յերեվալը տունդրայում և թունդրաների վերաբարձը պատկերվել են բալետի միջոցով, վորով և ավարտվել յերեկոն):

Այդ աշխատանքները Սուբբուտինան նախապատրաստել են վերին աստիճանի խնամքով, նախորոք ընտրելով գեղարվեստական նյութը և հանձնարարելով աշակերտներին, ընտրելով համապատասխան կինոնկարները, հանդեսի անցկացման կապակցությամբ դերի և աշխատանքի բաժանում կատարելով և հետեւ վերով նրանց իրագործմանը: Այդ յերեկոները, վորին մանակցել են 5-րդ դասարանից սկսած մինչև 10-րդ դասարանի աշակերտները (նայած յերեկոյի տեսվողությանն ու թեմայի մատչելիությանը), հսարավորություն են տվել դասասուին դրսեվորելու աշակերտների մեջ նրանց ձիրքը, հակումները և ոժանդակել դրանց դիրքը, հակումները և ոժանդակել դրանց դարձացմանը:

Այդպիսի յերեկոներն այնքան յերբեմն հաջող են անցել ու հետաքրքիր, վոր անգամ միծահասակ աշակերտները խնդրել են դասասուից աշխարհագրության թեմաների մեծ մասի նկատմամբ այդպիսի յերեկոներ կազմակերպել:

Հինելով 7-րդ դասարանի դասարանավար, այդ դասարանի պիոներ կովարի հետ միասին Սահմանական կազմակերպել աշխարհագրության գրական-յերաժշտական բաժին, կինո նկարների ցուցադրում, ցուցահանդեմների կազմակերպում և այլն:

Ված Ուկրաինական ԽՍՀ-ին: Այդ յերեկոն ձեւավորվել է հետեւյալ պլանով:

1. Պիոներ կովարի գելուցումը «Ուկրաինան առաջ և հիմա» թեմայի շուրջը:

2. Դեկամացիս «Յեկեք ճանապարհորդենք» վատանակորը («Աշխարհագրությունը բանաստեղծություններում» գրքից):

3. «Ուկրաինա» կինո նկարի դիտում:

4. Յերաժշտական համարներ (սոլո, նվազ և պարեր—ուկրաինական):

Այդ յերեկոյի աշխատանքները բաժանված են յեղել պիոներական ողակների միջև: ողակներից մեկը պատրաստել են արտասանություններ, յերերորդը՝ յերաժշտական համարներ, յերրորդը՝ պարեր:

Ըստ Սուբբուտինայի կատարած աշխատանքի համառոտ նկարագրությունը հիմնականում ցույց է տալիս, թե ինչպես կարելի յե կազմակերպել աշխարհագրական յերեկոները, ինչպես և, առևասարակ, աշխարհագրական խմբակների պարապմունքները, վորովեսպի նրանք չլինեն չոր ու ցամաք և անհետաքըլքիր: Ամեն մի գեղքում, աշխարհագրական խմբակի ամեն մի պարապմունքին հնարավոր և կարելի յետալ համապատասխան գեղարվեստական ձեւավորում—գրական-յերաժշտական բաժին, կինո նկարների ցուցադրում, ցուցահանդեմների կազմակերպում և այլն:

Աշխարհագրական արտադասարանական աշխատանքների շնորհքով կազմակերպումը խոշոր ազգակի հանդիսանա աշակերտների կոմունիստական դաստիարակության գործի լավագույն գրվածքի համար: Դրանով կատարած կինենք կուսակցության և կառա-

վարության վորոշումները աշխարհագրության դասավանդման աշխարհագրության, լսորացման մասին:

Ստանինյան մեծ գարաջրջանում աշխարհագրական գիտությունը պետք է գնել պահանջված բարձրության վրա:

Ա. 1939 թ.

Ակտ № 146

Վկան. լ.

233 H Арм.  
2-34152

ԳԻՆԸ 25 ԿՐԹԵԿ

Հայաստակի Ազգային գրադարան



NL0423067

20184

H Apm  
2-34152